

Կարծես քէ երբեք մագեբըդ-գիշեր
Մատներով մարմար չեմ գգուել, շոյել,
Կարծես ինձ նոր եմ, նոր եմ հմայել
Աֆշերըդ-հրդեհ, վարսերդ գիշեր:

Մօտս ես տակաւին, դու դեռ չես մեկնել,
Եւ գիտեմ շուտով դառնալու ես յետ.
Բայց ես անգոր եմ իմ կարօտիս հետ...
Ու մի՞թէ պիտի գրկեմ քեզ մէկ էլ:

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԱՀԱՐՈՆԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻ ՅՈՒՇ

Հայրենակցիս՝ դերասան ԶԱՐԻՖԵԱՆԻՆ

Փոշիածուփ, գորշ նամբաներն իմ երկրի,
Զանգակները դանդաղանեմ ուղտերի,
Լայնատարած հորիզոններն արեւկայ,
Արծաթագօծ գիշերներն իմ լուսնկայ...

Երբ լուսինը գաղտագողի կիսադէմ
Մութ ոլորտում կեյտում է մի նուրբ եղեմ,
Ոսկեվառում քղանցքները ամպերի
Հիւսուածքներով իր ոսկեքել մատների...

Առաւօտներն արեւառա՛տ, փիրուզէ,
Անգուսպ գարնան հալուող ձիւներն արմազէ,
Երեկոյեան դողանջները զանգերի,
Թալսծոտ հմայքն իմ հայրենի երգերի...

Փայտէ խոշոր դարպասների մուտքն ազա՛տ,
Մանուկների հիշ ու աղմուկն հարազատ,
Բակերի մէջ անհոգ ֆշուչն հաւերի,
Խօսուն կարկաչն արծաթգօտի աղբիւրի...

Որ՛քան կարօտ, որ՛քան հիա՛ցք ու արիւնս,
Բերում եմ ինչ յուշերն իմ հին մշտաճոս
— Փոշիածուփ գորշ նամբաներն իմ երկրի
Անուշ քալսիծն իմ հայրենի երգերի...

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ-ԱՀԱՐՈՆԵԱՆ



Գ Ո Ղ Թ Ա Ն Ե Ր Գ Ե Ր Ի Մ Ա Ս Ի Ն

Գրեց՝ ՆԻԿՈՂ ԱՂԲԱԱԵԱՆ

Կոլոմբիա (Նիւ Եորք) համալսարանի դա-
սախօս Լուի Հ. Գրէյ Revue des Etudes Ar-
meniennes պարբերականի վերջին թուի մէջ
(հատ. VI, պրակ 2, էջ 159—167) մի
փոքրիկ հետազոտութիւն ունի մեր հեթանո-
սական երգերի տաղաչափութեան մասին:

Մեր հնագոյն երգերի մնացորդները նա
համարում է «խզճալիօրէն սակաւթիւ», չնա-
յած դրան՝ ինքն իր հերթին պակսեցնում է նը-
րանց թիւը, մոռացութեան տալով երկու-երեք
թանկագին պատառիկ, որ պահել է Մ. Խորե-
նացին: Արժէ կարդալ Խորենացու պատմու-
թեան այն հատուածը, ուր ընդելուզուած են
այդ պատառիկները: (Մ. Խորենացի, Պատ-
մութիւն Հայոց. Թիֆլիս, 1913, Ա, 1 (լա):

Պօսելով այն մասին, թէ ինչպէս Տիգրան
Թագաւորը Աժդահակի կնոջը եւ նրա զարմի
աղջիկներին դերինների բազմութեան հետ բնա-
կեցրեց Մասիսի արեւելեան ուսից մինչեւ

Գողթան՝ նա ասում է.

«Յայտնենք»՝ զայս ճշմարտապէս եւ թուել-
եացն երգք, զոր պահեցին ակորթելով, որպէս
լսեմ, մարդիկ կողմանն զինեւէտ գաւառին
Գողթան, յորս շարին բանք երգոցն զԱրտա-
շիսէ եւ զորդոց նորա, յիշելով այլաբանաբար
եւ զզարմիցն Աժդահակայ, վիշապազունս զնո-
սա կոչելով. զի Աժդահակը ի մեր լեզուս է վի-
շապ:

* թարգմանութիւն. «Այս (բանը) ճշմար-
տապէս յայտնում են եւ թուելեաց երգերը, որ՝
ինչպէս լսում եմ՝ ակորթելով պահել են Գի-
նեւէտ Գողթան գաւառի կողմի մարդիկը, ո-
րոնց մէջ (այսինքն երգերի մէջ) շարուած են
Արտաշէսի եւ նրա որդիների մասին (եղած)
երգերի խօսքերը, այլաբանաբար յիշելով նա-
եւ Աժդահակի զարմերի մասին՝ վիշապազուն-
ներ կոչելով նրանց. որովհետեւ Աժտահակ (ա-